ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 01.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2021/91

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ վարչապետի աշխատակազմ

Բողոք բերող՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ

Երրորդ անձ՝ «Յուքոմ» ՓԲԸ

Մասնակցությամբ՝

ՀՀ վարչապետի աշխատակազմի ներկայացուցիչներ՝ Ս. Մուշեղյանի, Դ. Գրիգորյանի, Լ. Ավետիսյանի, Տ. Առուշանյանի,

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Վ. Մնացականյանի, Ս. Ջաբաղյանի,

«Յուքոմ» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Խաչատուրյանի, Գ. Թովմասյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ, միջգերատեսչական ցանցի և համացանցի տրամադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), քննության առնելով «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) կողմից 01.10.2021թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին չկայացած հայտարարել թիվ «ՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 01.10.2021թ.-ին:

01.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ բողոքը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2021/91 համարի ծածկագիրը:

12.10.2021թ.-ին՝ ներկայացված բանավոր միջնորդության հիման վրա «Յուքոմ» ՓԲԸ-ն ներգրավվել է գործով որպես երրորդ անձ:

12.10.2021թ.-ին, 27.10.2021թ.-ին և 01.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 27.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.11.2021թ.-ին:

2. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն, 01.10.2021թ.-ին ներկայացրած բողոքով, հայտնել է հետևյալը.

«1. Նախապատմությունը և փաստերը

1.1. 24.08.2021 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգում (gnumner.am) հրապարակվել է Վարչապետի աշխատակազմի կարիքների համար ՀՀ պետական մարմիններին միջգերատեսչական ցանցի և համացանցի տրամադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով թիվ ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով բաց մրցույթի (այսուհետ՝ «Գնման ընթացակարգ») հայտարարության և հրավերի վերաբերյալ ծանուցումը:

1.2. Գնանշման հայտարարությունը և հրավերը հրապարակվել են armeps.am կայքում:

1.3. Ըստ հայտարարության՝ հայտերի բացումը պետք է տեղի ունենա 04.10.2021թ. ժամը 11:00-ին:

1.4. Գնման ընթացակարգի հրավերի «Գնման առարկայի բնութագիր» բաժնի 1.1. կետում նշված է. «1.1 Գնման առարկա է հանդիսանում վարչապետի աշխատակազմի կարիքների համար՝ ՀՀ պետական մարմիններին միջգերատեսչական ցանցի և համացանցի տրամատման և սպասարկման ծառայությունների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ծառայություն), որը խմբավորված է 1 չափաբաժնում՝

Չափաբաժինների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	*Տարածքային ցանցի հետ կապված ծառայություններ*

Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում»:

1.5. Հրավերի թիվ 6 հավելվածում ներկայացված պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածում՝ որպես «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» նշված է.

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*տեխնիկական բնութագիրը*	*չափման միավորը*	*ընդհանուր գինը 36 ամսվա համար**	*ընդհանուր քանակը*	*մատուցման*	
						հասցեն	*Ժամկետը***
1	*72721100*	***Տարածքային ցանցի հետ կապված ծառայություններ՝*** *համաձայն ստորև ներկայացված տեխնիկական բնութագրի*	*դրամ*		*1*	*Ստորև ներկայացված հավելված 1-ում նշված հասցեներում*	*Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու հաջորդ աշխատանքային օրվանից հաշված 36 ամիս*

Մասնակիցները պետք է ունենան օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիաները:

** Ծառայությունների նախահաշվային արժեքը 36 ամսվա համար կազմում է 501 000 000 ՀՀ դրամ:*

*** Քանի որ պայմանագիրը կնքվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է*

ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

Տեխնիկական բնութագիր

Միջգերատեսչական ցանցի և համացանցի ապահովման ծառայությունների

1. Միջգերատեսչական ցանցի ապահովման ծառայություններ

N	Անվանում	Նկարագրություն
1.	Առանձնացված կապուղի	Առանձնացված օպտիկամանրաթելային կապուղիների (dark fiber) ապահովում (առնվազն 4 թելերի միացումով՝ յուրաքանչյուր զույգը տարբեր ճանապարհով) հիմնական հանգույցից (ՀՀ վարչապետի աշխատակազմ, կառավարական տուն 1) դեպի պահուստային հանգույց (Դավիթաշեն 4-րդ թ., Ա. Միկոյան 109/8), և պահուստային հանգույցից (Դավիթաշեն 4-րդ թ., Ա. Միկոյան 109/8) դեպի Տիգրան Մեծ 4, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ հանգույց՝ կապուղու ծայրակետերում ապահովել հասանելիություն SFP+ տեսակի պորտով: Վերոնշյալ կապուղին պետք է անցկացվի ստորգետնյա ճանապարհներով:
2.	Պայմաններ	Հավելվածի յուրաքանչյուր կետերում ապահովել համապատասխան թողունակությամբ երաշխավորված, երկկողմանի (սիմետրիկ) տվյալների փոխանցման ծառայություն, հետագայում արագությունների փոփոխության հնարավորությամբ:
		Կարգավորումները նախապես պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ:
		Հավելվածի 8-13 կետերում միացումները ապահովել ստորգետնյա ճանապարհներով:
		Անհրաժեշտ սարքավորումների տեղադրում:
		• "Latency" ոչ ավել քան 5 ms • Ապահովել ցանցային ուղղորդում բազմաթիվ պահուստային ճանապարհներով և վերականգնման ունակությամբ ("routing with multiple redundancy paths and resiliency") • Տեխնիկապես ապահովել ցանկացած կետում օգտագործվող ծառայությունների (հեռախոսակապ, ներքին ցանց, առանձնացված սերվերներ և այլն) բաժանումը տարբեր Layer 2 ենթացանցերի (VLAN) • Տարբեր կետերի խմբավորումը ըստ ծառայությունների Layer 2 ենթացանցերի (VLAN) • Ապահովել համակցում վերոնշյալ Layer 2 խմբերի միջև • Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր կետում ապահովել անհրաժեշտ քանակի ցանկացած "VLAN ID"-ի օգտագործման հնարավորությունը • Traffic shaping per VLAN/ ցակացած VLAN-ի վրա արագության կարգավորում • Ապահովել "QinQ, STP, Ethernet over MPLS" օգտագործման հնարավորությունը ցանկացած կետում
3.	Որակի պահանջներ	Հավելվածի ցանկ 1-3-ի որևէ կետում կապը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի, քան 4 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամկետով: Հավելվածի ցանկ 4-ի որևէ կետում կապը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի, քան 6 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 120 րոպեից ավելի ժամկետով
		Մեկ ամսվա ընթացքում հավելվածի ցանկ 1-3 –ի որևէ կետում չպետք խափանվի (բացակայի) ոչ ավելի, քան 120 րոպե ժամանակով, իսկ ցանկի 4-ի որևէ կետում՝ 240 րոպե ժամանակով: Սույն դրույթի իմատով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում կորպորատիվ ցանցի տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամկետների հանրագումար:
5.	Այլ պահանջներ	Օգտագործված ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում
		Կապի առկայության, որակի և մատուցման ծառայության ծավալի «on-line» վերահսկման հնարավորություն

1.6. Գնման ընթացակարգում Պատվիրատուն թույլ է տվել Գնումների մասին ՀՀ օրենսդրության դրույթների խախտումներ, խեղաթյուրվել է գնման գործընթացի էությունը, բացառվել է մրցակցությունը: Հետևաբար գնման ընթացակարգը պետք է հայտարարվի չեղյալ՝ հետևյալ հիմնավորմամբ:

2. Բողոքի իրավական և փաստական հիմքերը

2.1. Տեխնիկական բնութագրում նախատեսվել են պայմաններ, որոնք սահմանափակում են ազատ մրցակցությունը, անհնարին դարձնում կոնկրետ կապի օպերատորից բացի այլ կապի օպերատորի մասնակցությունը: Մասնավորապես՝ տեխնիկական բնութագրում, ի թիվս այլ պայմանների, որպես ձեռքբերվելիք ծառայության էական պայման նախատեսվել է, որ օպտիկամետաթելային կապուղիները պետք է անցկացվեն և միացումները ապահովվեն ստորգետնյա եղանակով:

2.2. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը դեռևս 17.09.2008թ.-ին «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ-ին (ներկայիս «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ, այսուհետ՝ «Գերիշխող օպերատոր») ճանաչել է Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ (աշխարհագրական սկզբունքով ամրագրված համարագրման ռեսուրսի օգտագործմամբ) Գերիշխող օպերատոր օպերատոր:

2.3. ՀՀ ստորերկրյա խողովակաշարերը, որոնցով պետք է անցկացվեն օպտիկամանրաթելային կապուղիները պատկանում են Գերիշխող օպերատորին: Փաստացի որևէ այլ օպերատոր՝ առանց Գերիշխող օպերատորից համապատասխան խողովակաշարերի, ենթակառուցվածքի վարձակալության նշված սեղմ ժամկետում չի կարող ապահովել Գնման ընթացակարգով պահանջվող ծառայությունը՝ ստորգետնյա եղանակով միացումներ:

2.4. Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 07.11.2011թ.-ի թիվ 414-Ն որոշմամբ հաստատվել են հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ Գերիշխող օպերատոր օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնները («Կանոններ») և վարձակալության վճարները: Կանոնների համաձայն «խողովակի ազատ թողունակություն» նշանակում է պահանջվող հասցեների միջև հանրային ամրակցված հեռախոսացանցի գծի ենթակառուցվածքի մաս կազմող խողովակի ուղղահայաց կտրվածքի մակերեսի 70 տոկոսի չօգտագործված մասը: Կանոնների 2-րդ կետի համաձայն, «եթե խողովակի ազատ թողունակությունը սպառված չէ. ապա որպես խողովակի ազատ թողունակություն կարելի է օգտագործել խողովակի ուղղահայաց կտրվածքի մինչև 75 տոկոսը՝ ներառյալ պահանջվող թողունակությունը»: Ընդորում, կանոնների 17-րդ կետի համաձայն ազատ խողովակի տրամադրումը կարող է

մերժվել, եթե «խողովակների ազատ թողունակությունը կսպառվի դիմումն ստանալու օրվանից հետո երեք տարվա ընթացքում»:

2.5. Այսպիսով, բավարար է, որ Գերիշխող օպերատորը որևէ մեկ ուղղությամբ մերժի ստորգետնյա խողովակում ազատ թողունակության տրամադրումը՝ պատճառաբանելով, որ չունի բավարար ազատ թողունակությունը, կամ որ խողովակների ազատ թողունակությունը կսպառվի դիմումն ստանալու օրվանից հետո երեք տարվա ընթացքում, որ նա դրանով անհնարին դարձնի այլ օպերատորների կողմից Գնման գործընթացի մասնակցությունը:

2.6. Բացի այդ, ակնհայտ է, որ իր մենաշնորհային դիրքի շնորհիվ գնման գործընթացում այլ օպերատորների հետ վերջինս արդեն իսկ գտնվում է անհավասար վիճակում (այլ անձինք չունեն համապատասխան ծավալի ենթակառուցվածքներ և պետք է Գերիշխող դիրք ունեցողից դրանք վարձակալեն՝ վճարելով վարձավճար Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից որոշված սակագներով), իսկ նմանատիպ սահմանափակ պահանջներով գնման բնութագիրը ոչ միայն առհասարակ անհնարին է դարձնում մրցակցությունը, այլև բացառում է անգամ զուտ տեսականորեն այլ օպերատորի հաղթող դառնալը:

2.7. Պատվիրատուին, իր կարգավիճակից ելնելով, պետք է հայտնի լինեն Երևան քաղաքում և առհասարակ ՀՀ ողջ տարածքում ստորգետնյա ենթակառուցվածքների վիճակը և մասնավորապես այն փաստը, որ Գերիշխող օպերատորից բացի որևէ այլ ընկերություն իրենից չկախված պատճառներով նման տեխնիկական կարողություններ չունի:

2.8. Ներկայումս Երևանի քաղաքապետարանի հետ, այդ թվում՝ Բողոք բերողի մասնակցությամբ, ընթանում են քննարկումներ Երևան քաղաքում հանրային հաղորդակցության համար ենթակառուցվածքների կառուցման հարցերը: Ծրագրվում է, որ նշված ենթակառուցվածքները պետք է լինեն համայնքային սեփականություն և հավասար պայմաններով վարձակալության հանձնվեն օպերատորներին:

2.9. Այսինքն, եթե Պատվիրատուն, ելնելով առկա օբյեկտիվ իրավիճակից, հրավերում նախատեսեր անցումային շրջան՝ օրինակ, որ որոշակի ողջամիտ ժամկետ ծառայությունները կարող են մատուցվել վերգետնյա եղանակով՝ պայմանով, որ ինչ-որ ամսաթվից հետո միայն դրանց մատուցումը պետք է լինի պարտադիր ստորգետնյա եղանակով, ապա այդ դեպքում միայն կապահովվեր մրցակցությունը և հնարավոր կլիներ ավելի մատչելի գնով ձեռք բերել ծառայությունը և նշված հանգամանքը կնպաստեր ստորգետնյա ենթակառուցվածքների զարգացմանը: Մինչդեռ հաշվի առնելով կնքվելիք

պայմանագրի երկարաժամկետ բնույթը, այս պայմաններով Գնման գործընթացը բացառում է ոչ միայն մասնակցությունը, այլև խոչընդոտելու է այդ ենթակառուցվածքների զարգացմանը, քանի որ մոտ ապագայում պետության կողմից պահանջարկ չի լինելու և մենաշնորհային իրավիճակը շարունակվելու է:

2.10. Ամփոփելով՝ գտնում ենք, որ Գնման գործընթացը կազմակերպվել է մրցակցությանը խոչընդոտող պայմանների սահմանմամբ, այդ թվում՝ չեն ապահովվել ստորև նշված իրավական ակտերի պարտադիր պահանջների կատարումը:

2.11. ՀՀ-ի համար 05.06.2015թ. ուժի մեջ մտած «Պետական գնումների մասին վերանայված համաձայնագրի» 10-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝

«Հոդված X Տեխնիկական բնութագրեր և մրցույթի փաստաթղթեր

Տեխնիկական բնութագրեր

5. Ցանկացած տեխնիկական բնութագրի մշակման կամ ընդունման ժամանակ պատվիրատուն չպետք է փնտրի կամ ընդունի, այնպիսի եղանակով, որը կարող է մրցակցությանը խոչընդոտող ազդեցություն ունենար խորհուրդ այնպիսի անձից, որը կարող է առևտրային շահ ունենալ գնումներում»:

2.12. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝

«2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը».

2.13. «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝

»2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն»:»:

Ելնելով վերոգրյալներից՝ Ընկերությունը Բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել Պատվիրատուին չկայացած հայտարարել թիվ «ՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգը:

Ընկերությունը, 25.10.2021թ.-ին ներկայացրած առարկություններով, հայտնել է նաև հետևյալը.

«01.10.2021 թվականին «MSU Արմենիա» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Բողոք բերող) ներկայացրել է բողոք՝ խնդրելով պարտավորեցնել Պատվիրատուին չկայացած հայտարարել թիվ ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով գնման ընթացակարգը: 12.10.2021 թվականին ստացել ենք բողոքի վերաբերյալ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից ներկայացված դիրքորոշումը՝ ստորև ներկայացնում ենք դիրքորոշման մեր առարկությունները:

Պատվիրատուն դիրքորոշման մեջ նշել է.

1. «...2019 թվականին նույնաբովանդակ պահանջ սահմանվել էր վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում, ինչպես նաև ընթացակարգի արդյունքում վարչապետի աշխատակազմի և «MSU Հայաստան» ՓԲԸ-ի միջև 23.01.2020 թվականին կնքված ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-20/20-1 ծածկագրով պայմանագրում, ինչը ևս բխել է Պատվիրատուի՝ ստորգետնյա լարանցում ունենալու պահանջից: Նշենք, որ հիշյալ պահանջը «MSU Հայաստան» ՓԲԸ-ի կողմից երբևէ չի բողոքարկվել»:

2. ...բողոքաբերի այն պնդումը, որ պահանջը խտրական է և կարող է բավարարվել բացառապես մեկ ընկերության՝ «գերիշխող օպերատորի» կողմից, անհիմն է և չի համապատասխանում իրականությանը:

Առաջին կետում ներկայացված փաստարկի վերաբերյալ, որ նախկինում Պատվիրատուի կողմից նույնաբովանդակ պահանջ (ստորգետնյա լարանցում ունենալու վերաբերյալ) նախատեսվել և չի բողոքարկվել, հայտնում ենք, որ նշված պնդումը չի համապատասխանում իրականությանը, որն ակնհայտորեն պարզ է դառնում մատնանշված՝ ՀՀՎԱ-ԲՄՔՁԲ-20/20-1 ծածկագրով գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունից: Այսպես, նշված ընթացակարգի շրջանակներում սահմանված տեխնիկական բնութագրում խոսք չի գնում ստորգետնյա լարանցում ունենալու պահանջի մասին. Ստորգետնյա բառը օգտագործվում է միայն հետևյալ կետերում.

Տեխնիկական բնութագրի հավելված կետ 2.

«Հիմնական հանգույցից (ՀՀ վարչապետի աշխատակազմ, կառավարական տուն 1) դեպի ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 գործող օպտիկամանրաթելային կապուղու (dark

fiber) սպասարկում, այն է՝ գետնանցումով անցնող մալուխների սպասարկում և վարձակալության պայմանների ապահովում»:

Տեխնիկական բնութագրի նկարագրությանը հաջորդող 2-րդ և 3-րդ պարբերություն.

«Կառուցել ստորգետնյա ֆիզիկապես առանձնացված օպտիկամանրաթելային մալուխ («dark fiber», բաղկացած առնվազն 8 թելից) հիմնական հանգույցից դեպի Հանրապետության հրապարակ, Կառավարական փուն 3 համապատասխան սարքավորումներով...»:

«Կառուցել ստորգետնյա ֆիզիկապես առանձնացված օպտիկամանրաթելային մալուխ («dark fiber», բաղկացած առնվազն 4 թելից) ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 և ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող., 5 շենքի միջև...»:

Մեջբերված հատվածներից պարզ է դառնում, որ սահմանված տեխնիկական բնութագրով նախատեսվել է միայն գետնանցումով անցնող մալուխների սպասարկում, ինչպես նաև հետագայում ստորգետնյա օպտիկամանրաթելային մալուխների կառուցում, մինչդեռ որևէ պահանջ չի եղել ստորգետնյա ճանապարհներ ունենալու վերաբերյալ, իսկ Բողոք բերողը բողոք է ներկայացրել գնման ընթացակարգի շրջանակներում պայմանագիր կնքելու պահի դրությամբ ստորգետնյա ճանապարհներ ունենալու պահանջի, այլ ոչ թե արդեն իսկ Պատվիրատուի առկա գետնանցումով անցնող մալուխների սպասարկման կամ կառուցման պահանջների դեմ, ուստի Պատվիրատուի այն պնդումը, որ նախկինում նույնաբովանդակ պահանջ սահմանվել և չի բողոքարկվել իրականությանը չի համապատասխանում:

Ինչ վերաբերվում է երկրորդ կետում նշված պնդմանը, որ պահանջը խտրական չէ և կարող է բավարարվել «գերիշխող օպերատոր»-ից բացի կապի այլ օպերատորների կողմից, հարկ ենք համարում ներկայացնել «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ին ուղղված դիմումը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2011 թվականի սեպտեմբերի 7-ի N 414-Ն որոշմամբ հաստատված հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ գերիշխող դիրք զբաղեցնող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնների համաձայն երեք տարի ժամկետով առկա ստորգետնյա մալուխատարներում համապատասխան թողունակության վարձակալության մասին և «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից ստացված պատասխանը՝ հայցվող հասցեներում խողովակաշարերի վարձակալության տրամադրման անհնարինության վերաբերյալ: Նշվածը հաստատում է Բողոք բերողի կողմից վկայակոչած

այն փաստը, որ «ՎԱ-ԲՄԾՁԲ-21/1 գնման ընթացակարգի շրջանակներում նախատեսված տեխնիկական բնութագրի պահանջը՝ կապուղիները ստորգետնյա ճանապարհով անցկացնելու վերաբերյալ, խտրական է և կարող է բավարարվել միայն «գերիշխող օպերատորի կողմից»:

Հիմք ընդունելով ամբողջ վերոգրյալը՝ հայտնում ենք, որ ամբողջությամբ առարկում ենք Պատվիրատուի կողմից 12.10.2021 թվականին ներկայացված դիրքորոշման դեմ:»:

3. <u>ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 04.10.2021թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/16107-2021 գրությամբ դիմել է ՀՀ վարչապետի աշխատակազմին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 01.10.2021թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն ստանալով գրավոր դիրքորոշում հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստին:

Պատվիրատուն, 12.10.2021թ.-ին թիվ 02/1.4/34690-2021 գրությամբ ներկայացված դիրքորոշմամբ, հայտնել է հետևյալը.

««ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կողմից ս.թ. հոկտեմբերի 1-ին ներկայացված թիվ /ԲՔԱ-ԼՕ/1/16107-2021 բողոքի (այսուհետ՝ Բողոք) վերաբերյալ վարչապետի աշխատակազմը հայտնում է հետևյալ դիրքորոշումը.

Վարչապետի աշխատակազմի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) կարիքների համար՝ ՀՀ պետական մարմիններին միջգերատեսչական ցանցի և համացանցի տրամադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ): Ընթացակարգի հրավերի մաս կազմող պայմանագրի նախագծին կից ներկայացված թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով, ի թիվս այլ պայմանների, սահմանվել է հետևյալ պայմանը. մասնավորապես, առանձնացված կապուղու նկարագրությունը սահմանում է, որ այն պետք է անցկացվի ստորգետնյա ճանապարհով, ինչպես նաև սահմանվել է պահանջ՝ պատվիրատուի կողմից տրամադրված ստորգետնյա ֆիզիկապես առանձնացված օպտիկամանրաթելային կապուղին սպասարկելու վերաբերյալ:

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է, որ Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված վերոհիշյալ պայմանները սահմանափակում են ազատ մրցակցությունը, անհնարին դարձնում կոնկրետ կապի օպերատորից բացի՝ այլ կապի օպերատորի մասնակցությունը: Մասնավորապես, ներկայացված բողոքով Ընկերությունը Բողոքներ քննող անձի ուշադրությունը հրավիրել է այն հանգամանքին, որ դեռևս 17.09.2008թ. հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը «ԱՐՄԵՆԹԵԼ» ՓԲԸ-ին (ներկայիս «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻՍ» ՓԲԸ) ճանաչել է ՀՀ տարածքում հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման գերիշխող օպերատոր: Եվ քանի որ, ըստ բողոքաբերի, ՀՀ ստորերկրյա խողովակաշարերը, որոնցով պետք է անցկացվեն օպտիկամանրաթելային կապուղիները, պատկանում են գերիշխող օպերատորին, ըստ այդմ վերջինս եզրակացնում է, որ որևէ այլ օպերատոր, առանց գերիշխող օպերատորից այդ խողովակաշարերի վարձակալության, Ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում չի կարող ապահովել պահանջվող ծառայությունը՝ ստորգետնյա եղանակով միացումները:

Վերը նշված դիտարկումների առնչությամբ հարկ ենք համարում նշել, որ Ընթացակարգի հրավերով սահմանված՝ ստորգետնյա նոր միացումներ ապահովելու պահանջը պայմանավորված է Կառավարության փոխգործելիության հարթակին միացված թվով 6 խոշոր ռեգիստրները և Կառավարության տվյալների կենտրոնները անվտանգ կապակցելու անհրաժեշտությամբ: Ընդ որում, ստորգետնյա նոր միացումները թվով 9-ն են և կազմում են պայմանագրի նախագծով ներկայացված ընդհանուր կետերի 1-2 տոկոսը:

Հայտնում ենք նաև, որ հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ Գերիշխող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնները և վարձակալության վճարները սահմանվել են հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 07.11.2011թ. թիվ 414-Ն որոշմամբ, ինչը բացառում է Գերիշխող օպերատորի կողմից այլ օպերատորների համար՝ նշված կանոնների և (կամ) վարձակալության վճարների կամայական սահմանան որևէ հնարավորություն:

Հավելենք, որ ստորգետնյա կապուղիների վերաբերյալ պահանջ սահմանված է եղել նաև նախկինում՝ 2017 թվականից ի վեր: Մասնավորապես, 2019թ. նույնաբովանդակ պահանջ սահմանվել էր վարչապետի աշխատակազմի կողմից կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում, ինչպես նաև ընթացակարգի արդյունքում վարչապետի աշխատակազմի և «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի միջև 23.01.2020թ. կնքված ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-

20/20-1 ծածկագրով պայմանագրում, ինչը ևս բխել է Պատվիրատուի՝ ստորգետնյա լարանցում ունենալու պահանջից: Նշենք, որ հիշյալ պահանջը «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից երբևէ չի բողոքարկվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 13-րդ հոդվածի՝

- *1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:*
- *2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:*
- *5-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:*

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ՝ բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:

Այսպիսով, համադրելով վերը նշված փաստական հանգամանքները և վկայակոչված իրավանորմերը՝ կարող ենք փաստել, որ «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի տեխնիկական բնութագիրը կազմված է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան, սպառիչ և ամբողջական նկարագրում է

ձեռք բերվող ծառայության հատկանիշները և չի պարունակում մրցակցության համար որևէ չհիմնավորված խոչընդոտ:

Ինչ վերաբերում է Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջին, ապա վերջինիս ապահովման մասին վկայում է այն փաստը, որ Ընթացակարգի հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալու դրությամբ համակարգում արդեն իսկ մասնակցության հայտեր էին ներկայացվել թվով չորս մասնակիցների (այդ թվում նաև բողոք ներկայացրած ընկերության) կողմից, հետևաբար, բողոքաբերի այն պնդումը, որ պահանջը խտրական է և կարող է բավարարվել բացառապես մեկ ընկերության՝ «գերիշխող օպերատորի» կողմից, անհիմն է և չի համապատասխանում իրականությանը: Ելնելով վերոգրյալից՝ հայտնում ենք, որ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքն անհիմն է և ամբողջովին ենթակա է մերժման:»:

4. <u>Երրորդ անձ՝ «Յուքոմ» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Ներկայացված բողոքի քննության ընթացքում, Բողոքներ քննող անձի որոշմամբ «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Յուքոմ» ՓԲԸ-ն 06.10.2021թ.-ին ներգրավվել է գործով որպես երրորդ անձ (այսուհետ նաև՝ Երրորդ անձ):

Երրորդ անձը լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին:

Երրորդ անձը ներկայացված գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

« 1. Նախապատմությունը և բողոքի փաստական հանգամանքները

1.1. 24.08.2021 թվականին ՀՀ ֆինանսների նախարարության գնումների համակարգում (www.gnumner.am ինտերնետային կայքում) հրապարակվել է ծանուցում Վարչապետի աշխատակազմի կարիքների համար ՀՀ պետական մարմիններին միջգերատեսչական ցանցի և համացանցի տրամադրման և սպասարկման ծառայություններ! ձեռքբերման նպատակով թիվ ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1 ծածկագրով բաց մրցույթի (այսուհետ՝ «Մրցույթ») հայտարարման և մրցույթի հրավերի վերաբերյալ :

1.2. Ըստ Մրցույթի հրավերի՝ հայտերի բացումը պետք է տեղի ունենա 04.10.2021թ. ժամը 11:00-ին:

1.3. Մրցույթի հրավերի «Գնման առարկայի բնութագիր» բաժինը պարունակում է հետևյալ տեղեկատվությունը՝

«1.1 Գնման առարկա է հանդիսանում վարչապետի աշխատակազմի կարիքների համար՝ ՀՀ պետական մարմիններին միջգերատեսչական ցանցի և համացանցի տրամադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերումը (այսուհետ՝ նաև ծառայություն), որը խմբավորված է 1 չափաբանում՝

Չափաբաժինների համարները	*Չափաբաժնի անվանումը*
1	*Տարածքային ցանցի հետ կապված ծառայություններ*

Ծառայության տեխնիկական բնութագրերը, ինչպես նաև մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ՝ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են կնքվելիք պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի N 6 հավելվածում»:

1.4. Հրավերի թիվ 6 հավելվածում ներկայացված պայմանագրի նախագծի թիվ 1 հավելվածում՝ որպես «տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց» նշված է.

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*տեխնիկական բնութագիրը*	*չափման միավորը*	*ընդհանուր գինը 36 ամսվա համար**	*ընդհանուր քանակը*	*մատուցման*	
						հասցեն	*Ժամկետը***
1	*72721100*	***Տարածքային ցանցի հետ կապված ծառայություններ՝*** *համաձայն ստորև ներկայացված տեխնիկական բնութագրի*	*դրամ*		*1*	*Ստորև ներկայացված հասցեներում 1-ում նշված հասցեներում*	*Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու հաջորդ աշխատանքային օրվանից հաշված 36 ամիս*

Մասնակիցները պետք է ունենան օրենսդրությամբ սահմանված համապատասխան լիցենզիաները:

** Ծառայությունների նախահաշվային արժեքը 36 ամսվա համար կազմում է 501 000 000 ՀՀ դրամ*

*** Քանի որ պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է*

ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:

Տեխնիկական բնութագիր

Միջգերատեսչական ցանցի և համացանցի ապահովման ծառայությունների

Միջգերատեսչական ցանցի ապահովման ծառայություններ

N	Անվանում	Նկարագրություն
1.	Առանձնացված կապուղի	Առանձնացված օպտիկամանրաթելային կապուղիների (dark fiber) ապահովում (առնվազն 4 թելերի միացումով՝ յուրաքանչյուր զույգը տարբեր ճանապարհով) հիմնական հանգույցից (ՀՀ վարչապետի աշխատակազմ, կառավարական տուն 1) դեպի պահուստային հանգույց (Դավիթաշեն 4-րդ թ., Ա. Միկոյան 109/8), և պահուստային հանգույցից (Դավիթաշեն 4-րդ թ., Ա. Միկոյան 109/8) դեպի Տիգրան Մեծ 4, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ հանգույց՝ կապուղու ծայրակետերում ապահովել հասանելիություն SFP+ տեսակի պորտով: Վերոնշյալ կապուղին պետք է անցկացվի ստորգետնյա ճանապարհներով:
2.	Պայմաններ	Հավելվածի յուրաքանչյուր կետերում ապահովել համապատասխան թողունակությամբ երաշխավորված, երկկողմանի (սիմետրիկ) տվյալների փոխանցման ծառայություն, հետագայում արագությունների փոփոխության հնարավորությամբ:
		Կարգավորումները նախապես պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ:
		Հավելվածի 8-13 կետերում միացումները ապահովել ստորգետնյա ճանապարհներով:
		Անհրաժեշտ սարքավորումների տեղադրում:
		• "Latency" ոչ ավել քան 5 ms • Ապահովել ցանցային ուղղորդում բազմաթիվ պահուստային ճանապարհներով և վերականգնման ունակությամբ ("routing with multiple redundancy paths and resiliency") • Տեխնիկապես ապահովել ցանկացած կետում օգտագործվող ծառայությունների (հեռախոսակապ, ներքին ցանց, առանձնացված սերվերներ և այլն) բաժանումը տարբեր Layer 2 ենթացանցերի (VLAN) • Տարբեր կետերի խմբավորումը ըստ ծառայությունների Layer 2 ենթացանցերի (VLAN) • Ապահովել համակցում վերոնշյալ Layer 2 խմբերի միջև • Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր կետում ապահովել անհրաժեշտ քանակի ցանկացած "VLAN ID"-ի օգտագործման հնարավորությունը • Traffic shaping per VLAN/ ցակացած VLAN-ի վրա արագության կարգավորում • Ապահովել "QinQ, STP, Ethernet over MPLS" օգտագործման հնարավորությունը ցանկացած կետում
3.	Որակի պահանջներ	Հավելվածի ցանկ 1-3-ի որևէ կետում կապը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի, քան 4 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամկետով: Հավելվածի ցանկ 4-ի որևէ կետում կապը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի, քան 6 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 120 րոպեից ավելի ժամկետով
		Մեկ ամսվա ընթացքում հավելվածի ցանկ 1-3 –ի որևէ կետում չպետք խափանվի (բացակայի) ոչ ավելի, քան 120 րոպե ժամանակով, իսկ ցանկի 4-ի որևէ կետում՝ 240 րոպե ժամանակով: Սույն դրույթի իմաստով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում կորպորատիվ ցանցի տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամկետների հանրագումար:
5.	Այլ պահանջներ	Օգտագործված ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում
		Կապի առկայության, որակի և մատուցման ծառայության ծավալի «on-line» վերահսկման հնարավորություն

1.5. Կարծում ենք՝ Մրցույթի գնման ընթացակարգը (մասնավորապես՝ դրանում սահմանված տեխնիկական բնութագիրը) պարունակում է այնպիսի պայմաններ, որոնք, ինքնին, խաթարում են գնման գործընթացի մրցակցային էությունը՝ հակասելով սույն գործընթացի օրինականության ապահովման համար ՀՀ օրենսդրությամբ ամրագրված

սկզբունքներին և պարտադիր պահանջներին: Սույն պնդումը հիմնված է բողոքի երկրորդ բաժնում շարադրված հետևյալ իրավական և փաստական հիմքերի վրա:

2. Բողոքի իրավական և փաստական հիմքերը

2.1. Գնումների ոլորտի կարգավորմանն ուղղված ՀՀ օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ այն իր բնույթով սկզբունքահեն է: Մասնավորապես այդ մասին է խոսում այն հանգամանքը, որ օրենսդիրը տարբեր բնույթ ունեցող գնումների գործընթացային առանձնահատկությունների մարնակրկիտ կարգավորմանը զուգահեռ սահմանել է որոշակի սկզբունքներ, որոնք անխտիր վերաբերելի են ցանկացած բնույթ ունեցող գնումների գործընթացներին:

2.2. Համապատասխանաբար, օրենսդրի կողմից գնումների գործընթացի կարգավորմանն ուղղված սկզբունքները այն հիմնական չափանիշներնն են, որոնք թույլ են տալիս հիմնային կերպով գնահատման ենթարկել գնուԱների գործընթացի՝ օրենսդրության պահանջներին համապատասխանությունը՝ օրինականությունը:

2.3. Գնումների մասին ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանվում է որ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում,

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում,

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

2.4. Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը ամրագրում են՝

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

2.5. Վերոհիշատակված հոդվածներում տեղ գտած ձևակերպումներից կարելի է եզրահանգել, որ օրենսդրական ամրագրում ունեցող գնման գործընթացի կազմակերպման սկզբունքներն ունեն գործնական կարևոր նշանակություն: Մասնավորապես՝ հիշատակված սկզբունքները իրենց բնույթով ձևական չեն, դրանց ապահովման համար պահանջվում է,

որպեսզի կոնկրետ սուբյեկտի (գնման պատվիրատուի) կողմից գնման գործընթացի բոլոր փուլերում՝ սկսած գնման մրցույթի հրավերի հրապարակումից, կատարվեն օրենսդրորեն սահմանված նպատակների իրագործմանն ուղղված համապատասխան գործողություններ: Այսպիսով՝ պատվիրատուների կողմից կազմակերպվող գնման ընթացակարգերը ոչ միայն պետք է առերևույթ համապատասխանեն գնումների մասին գործող օրենսդրությամբ ներկայացվող պահանջներին, այլև, ելնեն սկզբունքներից և ապահովեն իրավակարգավորումներով հետապնդվող նպատակների իրագործումը:

2.6. Ասվածի հաշվառմամբ՝ անվիճելի է, որ օրենսդրության ընթացակարգային պահանջներին առերևույթ համապատասխանող գնման ընթացակարգը չի կարող լինել օրինական, եթե գնման առարկայի նեղ նկարագրության արդյունքում պատվիրատուն սահմանափակել է հնարավոր մասնակիցների մասնակցությունը կամ մասնակցության «արդյունավետությունը», խախտել մրցակցային և ոչ խտրական հիմունքներով գնումների գործընթացի կազմակերպման կարևորագույն սկզբունքը:

2.7. Մրցույթի հրավերի ուսումնասիրության արդյունքում կարելի է եզրահանգել, որ պատվիրատուի կողմից առերևույթ պահպանված են օրենսդրությամբ սույն գործընթացի կարգավորմանն ուղղված ընթացակարգային պայմանները, սակայն այն լիովին օրինական գնահատելու համար խոչընդոտ է հանդիսանում այն հանգամանքը, որ Մրցույթի գնման ընթացակարգի տեխնիկական բնութագրում, ի թիվս այլ պայմանների, որպես ձեռքբերվելիք ծառայության վերագրվող էական պայման նախատեսվել է, օպտիկամանրաթելային կապուղիների՝ մասնակցի կողմից սեփական եղանակով անցկացումը և միացումը ապահովելու պարտադիրությունը:

2 8. Սույն պայմանը, մեր գնահատմամբ խտրական է և իր բնույթով չի նպաստում և խրախուսում պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը՝ ճիշտ հակառակը հնարավորինս սահմանափակելով և արհեստականորեն խոչընդոտելով մասնակցելու հավակնություն ունեցող սուբյեկտների «հաջողության հասնելու» հնարավորությունները: Պայմանը, ինքնին, այդպիսին չէր գնահատվի, եթե չլիներ օբյեկտիվ իրականությունում առկա հետևյալ իրավիճակը:

2.9. Կարծում ենք, Պատվիրատուին, իր կարգավիճակի ուժով, հայտնի է, որ Երևան քաղաքում և առհասարակ ՀՀ ողջ տարածքում Մրցույթի գնման գործընթացում սահմանված սույն պայմանի իրագործման տեխնիկական և գործնականում չմիջնորդավորված ապահովման հնարավորություն ունի միայն մեկ օպերատոր:

2.10. «ԱՐՄԵՆՏԵԼ» ՓԲԸ-ն (ներկայումս՝ «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ) դեռևս 17.09.2008 թվականին Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ ճանաչվել է որպես Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ (աշխարհագրական սկզբունքով ամրագրված համարագրման ռեսուրսի օգտագործմամբ) Գերիշխող օպերատոր: ՀՀ տարածքում առկա ստորգետնյա խողովակաշարերը, որոնցով, ըստ Մրցույթի գնման ընթացակարգի, անհրաժեշտ է, որպեսզի անցկացվեն օպտիկամանրաթելային կապուղիները պատկանում են «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին (այսուհետ՝ «Գերիշխող օպերատոր»): Համապատասխանաբար անժխտելի փաստ է, որ որևէ օպերատոր, Մրցույթին հայտ ներկայացնելու համար նախատեսված սեղմ ժամկետում, ունակ չէ, առանց Գերիշխող օպերատորից համապատասխան խողովակաշարերի և ենթակառուցվածքի վարձակալության, ապահովելու Մրցույթի գնման ընթացակարգերով սահմանված պահանջների անխոչընդոտ իրականացումը:

2.11. Ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ հիշատակված փաստը Մրցույթի գնման ընթացակարգի օրինականության գնահատման համատեքստում:

2.12. Առաջին հերթին վարձակալության իրավունքի տրամադրման «մենաշնորհ»-ի մեկ օպերատորին պատկանելիությունը, արդեն իսկ ազդակ է, որը փաստում է, Պատվիրատուի կողմից նախաձեռնված մրցույթում՝ պոտենցիալ մասնակիցների ի սկզբանե անհավասար մեկնարկային դիրքերի առկայության մասին, միևնույն տնտեսական միջավայրում գործող օպերատորների մրցույթին Ասնակցելու և հաջողություն ունենալու հնարավորությունը կախվածության մեջ է դրված մեկ այլ օպերատորի որոշումից՝ այդպիսով վերջինիս տալով առավել շահեկան մեկնարկային դիրք:

2.13. Փաստացի առկա է իրավիճակ, որում Մրցույթի պոտենցիալ մասնակից օպերատորներից մեկը օժտված է այնպիսի լծակներով ինչպիսիք են համապատասխան ենթակառուցվածքները մեկ այլ օպերատորի վարձակալության իրավունքով տրամադրելու առնչությամբ վերջնական որոշման կայացումը, ինչպես նաև վերջինիս կողմից այդ իրավուքնի տրամադրման դիմաց Մրցույթի պոտենցիալ մասնակից այլ օպերատորների վարձավճարի պարտադիր վճարման փաստի ուժով առավել մրցունակ գնային առաջակի ներկայացուման հնարավորությունը:

2.14. Վարձակալության իրավունքի տրամադրման մենաշնորհային դիրքը, առաջ է քաշում ևս մեկ հիմնավոր հարց, որի բացասական պատասխանը հնարավոր է դարձնում օրենսդրական և մեկ սկզբունքի հնարավոր խախտում, արդյո՞ք գերիշխող օպերատորը

պարտավոր է այլ օպերատորներին տրամադրել ստորգետնյա խողովակաշարերի, ենթակառուցվածքի վարձակալության իրավունք: Ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ համապատասխան ենթակառուցվածքների վարձակալության իրավունքով Գերիշխող օպերատորի կողմից այլ օպերատորին տրամադրելու պարտադիրությունը երաշխավորված չէ:

2.15. Մասնավորապես՝ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 07.11.2011 թվականի թիվ 414-Ն որոշմամբ հաստատված են հանրային ամրակցված հեռախոսացանցի շահագործման մեջ Գերիշխող օպերատորների կողմից այլ օպերատորներին հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության վարձակալության տրամադրման կանոնները (այսուհետ՝ «Կանոններ») Լ.ս դրանց դիմաց վճարման ենթակա վարձակալական վճարները:

2.16. Չնայած այն հանգամանքին, որ Կանոնները պարտավորեցնում են Գերիշխող օպերատորին այլ օպերատորի կողմից համապատասխան հայտի առկայության դեպքում տրամադրել հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակներ, սակայն դա անելու համար անհրաժեշտ է, մեկ պայմանի պարտադիր առկայությունը՝ հանրային ամրակցված հեռախոսացանցի խողովակների ազատ թողունակության առկայությունը:

2.17. Կանոնների համաձայն «խողովակի ազատ թողունակություն» նշանակում է պահանջվող հասցեների միջև, հանրային ամրակցված հեռախոսացանցի գծի ենթակառուցվածքի մաս կազմող խողովակի ուղղահայաց կտրվածքի մակերեսի 70 տոկոսի չօգտագործված մասը: Կանոնների 2-րդ կետի համաձայն, «եթե խողովակի ազատ թողունակությունը սպառված չէ, ապա որպես խողովակի ազատ թողունակություն կարելի է օգտագործել խողովակի ուղղահայաց կտրվածքի մինչև 75 տոկոսը՝ ներառյալ պահանջվող թողունակությունը:

2.18. Հիշատակվածի վերլուծությունից պարզ է դառնում, որ ազատ թողունակության առկայությունը դիմումատուի կամքի հետ չփոխկապակցված երևույթ է, վերջինս չի կարող կանխատեսել, կանխորոշել կամ որևէ կերպ ազդել տվյալ փաստի օբյեկտիվ իրականության մեջ առկայության կամ բացակայության վրա:

2.19. Ավելին, Կանոնների 17-րդ կետով ազատ խողովակի տրամադրումը կարող է մերժվել նաև, եթե «խողովակների ազատ թողունակությունը կսպառվի դիմումն ստանալու օրվանից հետո երեք տարվա ընթացքում»:

2.20. Այսպիսով, Գերիշխող օպերատորի կողմից որևէ ուղղությամբ ստորգետնյա խողովակում ազատ թողունակության տրամադրման մերժման դեպքում (դիմում

ներկայացման պահին բավարար ազատ թողունակության բացակայության, կամ խողովակների ազատ թողունակությունը դիմումն ստանալու օրվանից հետո երեք տարվա ընթացքում սպառման պատճառաբանությամբ), անհնարին կդառնի այլ օպերատորների կողմից Գնման գործընթացի մասնակցությունը:

Օբյեկտիվորեն հարց է առաջանում՝ արդյո՞ք մրցույթի պոտենցիալ մասնակիցը տեսականորեն հնարավորություն ունի որևէ կերպ հաղթահարել մրցույթի՝ իր մասնակցության արդյունավետությանը խոչընդոտող հանգամանքների բացասական ազդեցությունը: Ներկայումս առկա իրավիճակում, ակնհայտ է, որ բարձրացված հարցի պատասխանը բացասական է: Նման իրավիճակում միանշանակ է, որ Մրցույթի գնման գործընթացը գնահատելիս խոսք անգամ չի կարող գնալ պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում մասին:

2.21. Սակայն արդյո՞ք հնարավոր էր Պատվիրատուի կողմից սահմանել այնպիսի տեխնիկական պահանջներ, որոնք թույլ կտային շրջանցել ստեղծված իրավիճակը ապահովելով օրենսդրորեն սահմանված կառուցակարգերի արդյունավետ իրագործումը: Միանշանակ՝ այո:

2.22. Վերոմատնանշված պնդման համար հիմք է ծառայում հետևյալ հանգամանքը՝ ներկայումս երևանի քաղաքապետարանի հետ, ընթանում են քննարկումներ Երևան քաղաքում հանրային հաղորդակցության համար ենթակառուցվածքների կառուցման հարցերի վերաբերյալ: Քննարկումների արդյունքում, որպես օպտիմալ լուծում ծրագրվում է, որ նշված ենթակառուցվածքները պետք է լինեն համայնքային սեփականություն և հավասար պայմաններով վարձակալության հանձնվեն օպերատորներին:

2.23. Ասվածից հետևում է, որ օբյեկտիվորեն Պատվիրատուի կողմից կարող էին նախատեսվել այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտային, ապահովելով մասնակիցների միջև արդյունավետ և իրատեսական մրցակցությունը: Մասնավորապես եթե Պատվիրատուն, ելնելով առկա օբյեկտիվ իրավիճակից, Մրցույթի գնման ընթացակարգում նախատեսեր անցումային շրջան՝ օրինակ, որ որոշակի ողջամիտ ժամկետ ծառայությունները կարող են մատուցվել վերգետնյա եղանակով՝ պայմանով, որ ինչ-որ ամսաթվից հետո միայն դրանց մատուցումը պետք է լինի պարտադիր ստորգետնյա եղանակով, ապա այդ դեպքում կապահովվեր մրցակցությունը և հնարավոր կլիներ ավելի մատչելի գնով ձեռք բերել ծառայությունը՝ բալանսավորելով գնային առաջարկ ներկայացնելիս բոլոր մասնակիցների դիրքերի հարաբերական հավասարությունը:

2.24. Ավելին՝ նշված հանգամանքը կնպաստեր սպորգետնյա ենթակառուցվածքների զարգացմանը: Մինչդեռ հաշվի առնելով կնքվելիք պայմանագրի երկարաժամկետ բնույթը, այս պայմաններով առկա Գնման գործընթացը կարծես թե բացառում է ոչ միայն այլ օպերատորների արդյունավետ մասնակցությունը ներկայիս մրցութային գործընթացին, այլև հող է ստեղծում խոչընդոտելու համար Հայաստանի Հանրապետությունում սպորգետյա ենթակառուցվածքների զարգացմանը: Բանն այն է, որ Մրցույթի գնման ընթացակարգով նախատեսված պահանջարկը այնպիսն է, որ խելամիտ է կանխատեսել, որ մոտ ապագայում պետության կողմից նմամ ենթակառուցվածքի պահանջարկ չի լինելու և մենաշնորհային իրավիճակը շարունակվելու է:

2.25. Ամփոփելով՝ գտնում ենք, որ Գնման գործընթացը կազմակերպվել է մրցակցությանը խոչընդոտող պայմանների սահմանմանը., այդ թվում՝ չեն ապահովվել վերոնշված իրավական ակտերի պարտադիր պահանջների կատարումը:»:

5. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2021/91 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական ցանցի և համացանցի տրամադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Մրցույթ կամ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար տարածքային ցանցի հետ կապված ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով (այսուհետ նաև՝ Հավելված 1) սահմանվել է հետևյալը.

N	Անվանում	Նկարագրություն
1.	Առանձնացված կապուղի	Առանձնացված օպտիկամանրաթելային կապուղիների (dark fiber) ապահովում (առնվազն 4 թելերի միացումով՝ յուրաքանչյուր զույգը տարբեր ճանապարհով) հիմնական հանգույցից (ՀՀ վարչապետի աշխատակազմ, կառավարական տուն 1) դեպի պահուստային հանգույց (Դավիթաշեն 4-րդ թ., Ա. Միկոյան 109/8), և պահուստային

		հանգույցից (Դավիթաշեն 4-րդ թ., Ա. Միկոյան 109/8) դեպի Տիգրան Մեծ 4, «ԷԿԵՆԳ» ՓԲԸ հանգույց՝ կապուղու ծայրակետերում ապահովել հասանելիություն SFP+ տեսակի պորտով: Վերոնշյալ կապուղին պետք է անցկացվի ստորգետնյա ճանապարհներով:
2.	Պայմաններ	Հավելվածի յուրաքանչյուր կետերում ապահովել համապատասխան թողունակությամբ երաշխավորված, երկկողմանի (սիմետրիկ) տվյալների փոխանցման ծառայություն, հետագայում արագությունների փոփոխության հնարավորությամբ:
		Կարգավորումները նախապես պետք է համաձայնեցնել պատվիրատուի հետ:
		Հավելվածի 8-13 կետերում միացումները ապահովել ստորգետնյա ճանապարհներով:
		Անհրաժեշտ սարքավորումների տեղադրում:
		• “Latency” ոչ ավել քան 5 ms • Ապահովել ցանցային ուղղորդում բազմաթիվ պահուստային ճանապարհներով և վերականգնման ունակությամբ (“routing with multiple redundancy paths and resiliency”) • Տեխնիկապես ապահովել ցանկացած կետում օգտագործվող ծառայությունների (հեռախոսակապ, ներքին ցանց, առանձնացված սերվերներ և այլն) բաժանումը տարբեր Layer 2 ենթացանցերի (VLAN) • Տարբեր կետերի խմբավորումը ըստ ծառայությունների Layer 2 ենթացանցերի (VLAN) • Ապահովել համակցում վերոնշյալ Layer 2 խմբերի միջև • Անհրաժեշտության դեպքում յուրաքանչյուր կետում ապահովել անհրաժեշտ քանակի ցանկացած “VLAN ID”-ի օգտագործման հնարավորությունը • Traffic shaping per VLAN/ ցակացած VLAN-ի վրա արագության կարգավորում • Ապահովել “QinQ, STP, Ethernet over MPLS” օգտագործման հնարավորությունը ցանկացած կետում

3.	Որակի պահանջներ	Հավելվածի ցանկ 1-3-ի որևէ կետում կապը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի, քան 4 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 60 րոպեից ավելի ժամկետով: Հավելվածի ցանկ 4-ի որևէ կետում կապը չպետք է խափանվի տարեկան ոչ ավելի, քան 6 անգամ: Սույն դրույթի իմաստով խափանում է համարվում կապի բացակայությունը՝ յուրաքանչյուր խափանման դեպքում 120 րոպեից ավելի ժամկետով
		Մեկ ամսվա ընթացքում հավելվածի ցանկ 1-3 –ի որևէ կետում չպետք խափանվի (բացակայի) ոչ ավելի, քան 120 րոպե ժամանակով, իսկ ցանկի 4-ի որևէ կետում՝ 240 րոպե ժամանակով: Սույն դրույթի իմատով կապի խափանման (բացակայության) ժամանակը հաշվարկվում է որպես մեկ ամսվա ընթացքում կորպորատիվ ցանցի տվյալ կետում կապի բոլոր խափանումների (բացակայությունների) ժամկետների հանրագումար:
5.	Այլ պահանջներ	Օգտագործված ծավալների վերաբերյալ տեղեկատվության ստացում
		Կապի առկայության, որակի և մատուցման ծառայության ծավալի «on-line» վերահսկման հնարավորություն

Անհրաժեշտության դեպքում պատվիրատուն կարող է պահանջել մատակարարից մինչև 30 կետի ավելացում և 50 կետի տեղափոխում՝ մարզերի դեպքում (մինչև 3 կմ մատակարարի մոտակա տեխնիկական հանգույցից): Պատվիրատուն կարող է պահանջել մատակարարից գումարային թողունակության մինչև

1 Gb/s ավելացում ինչպես նաև թողունակության վերաբաշխում կետերի միջև:

Տրամադրել 10 հատ Cisco ISR 1111–8p (IPSEC HSEC, AppX և Security լիցենզիաները ներառյալ) երթուղիչներ, 10 հատկացված կետերի միացումը հիմնական հանգույցի հետ VPN տեխնոլոգիայով իրականացնելու նպատակով:

Սպասարկել պատվիրատուի կողմից տրամադրված ստորգետնյա ֆիզիկապես առանձնացված օպտիկամանրաթելային կապուղի (dark fiber, բաղկացած 8 թելից), հիմնական հանգույցից դեպի Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, համապատասխան սարքավորումներով (տես աղյուսակ 2), ապահովելով խափանակայունությունը՝ յուրաքանչյուր կետում միացնելով համապատասխան քանակի թելեր (առնվազն 2):

Կառավարական տուն 3 (Աղյուսակ 1) կետերի սերվերային հանգույցներում ապահովել օպտիկամանրաթելային կապուղիներ (բաղկացած առնվազն 4 թելից) համապատասխան սարքավորումներով (տես աղյուսակ 2):

Սպասարկել պատվիրատուի կողմից տրամադրված ստորգետնյա ֆիզիկապես առանձնացված օպտիկամանրաթելային կապուղի (dark fiber), բաղկացած առնվազն 4 թելից ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 և ք. Երևան, Վազգեն Սարգսյան փող., 5 շենքերի միջև՝ համապատասխան սարքավորումներով ապահովելով խափանակայունությունը (տես աղյուսակ 2)՝ յուրաքանչյուր կետում միացնելով համապատասխան քանակի թելեր (առնվազն 2):

Ք. Երևան, Վազգեն Սարգսյան 3/8 կետերի սերվերային հանգույցներում ապահովել օպտիկամանրաթելային կապուղիներ (բաղկացած առնվազն 4 թելից) համապատասխան սարքավորումներով (տես աղյուսակ 2):

Մրցույթին մասնակցելու համար հայտեր են ներկայացրել «Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ-ն, «Յուքոմ» ՓԲԸ-ն, «Ջիէնսի-Ալֆա» ՓԲԸ-ն և «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն:

iii. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով՝ գնային առաջարկով, ուսումնասիրելով «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ներկայացրել է պայմանագրի կատարման համար ընդհանուր գին:

v. «Յուքոմ» ՓԲԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

vi. «Յուքոմ» ՓԲԸ-ն մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով՝ գնային առաջարկով, ուսումնասիրելով «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերը, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագիծը, ներկայացրել է պայմանագրի կատարման համար ընդհանուր գին:

6. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 01.10.2021թ.-ին ներկայացված բողոքն անհիմն է և ենթակա մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

5. Գնման առարկայի հատկանիշները չպետք է պահանջ կամ հղում պարունակեն որևէ առևտրային նշանի, ֆիրմային անվանմանը, արտոնագրին, էսքիզին կամ մոդելին, ծագման երկրին կամ կոնկրետ աղբյուրին կամ արտադրողին, բացառությամբ այն

դեպքերի, երբ անհնար է գնման առարկայի բնութագրումն առանց դրանց: Հղումներ օգտագործելու դեպքում հատկանիշների բնութագիրը պետք է պարունակի «կամ համարժեք» բառերը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 21-րդ կետի 1-ին ենթակետի «ա» պարբերության համաձայն՝ եթե գնման գործընթացների կազմակերպման ժամանակացույցով այլ ժամկետ նախատեսված չէ, ապա գնման պահանջի ծագման օրվան հաջորդող քսան աշխատանքային օրվա ընթացքում պատասխանատու ստորաբաժանումը՝ կազմում և հաստատում է գնման հայտը, որը ներառում է գնման առարկայի բնութագրերը: Ապրանքների գնման դեպքում նշվում է նաև մասնակցի կողմից առաջարկվող ապրանքային նշանի, ֆիրմային անվանման, մակնիշի և արտադրողի վերաբերյալ տեղեկատվության ներկայացման անհրաժեշտությունը, իսկ պայմանագրի կատարման փուլում ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտությունը, եթե դրանք կիրառելի են տվյալ ապրանքի համար: Ընդ որում, պայմանագրի կատարման փուլում այն կնքած մասնակցից ծագման երկրի սերտիֆիկատ չի պահանջվում:

Կարգի 22-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ...:

Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ Ընթացակարգի հրավերի թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ցանկացած պահանջ պետք է ապահովի մրցակցության հավասար պայմաններ հնարավոր մասնակիցների համար, օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Տեխնիկական բնութագրով սահմանված այն չափորոշիչների մասով, որոնք պարունակում են հղում ապրանքային նշանին, սահմանված պետք է լինի «կամ համարժեք» արտահայտությունը:

Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց

պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Բողոքներ քննող անձը փաստում է նաև, որ Ընթացակարգի գնման առարկայի բնութագրերն ամբողջությամբ և հստակ պետք է նկարագրեն ձեռքբերվող ապրանքի հատկանիշները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը, հնարավոր մասնակիցների համար պետք է ապահովեն մրցակցության հավասար պայմաններ, դրանով իսկ բացառելով գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացումը: Ինչպես նաև բնութագիրն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք պետք է լինի այն կարիքին, որի բավարարման նպատակով հայտարարվել է Ընթացակարգը:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից միջգերատեսչական ցանցի և համացանցի տրամադրման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 24.08.2021թ.-ին հայտարարված «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար տարածքային ցանցի հետ կապված ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ կապուղին պետք է անցկացվի և միացումներն ապահովվեն ստորգետնյա ճանապարհներով:

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ

որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջի շրջանակը, պետք է բողոքի հետ միաժամանակ ներկայացնի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝ որպես բողոքի բավարարմանն ուղղված էական նշանակություն ունեցող հիմքեր ու հիմնավորումներ: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակում բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները ներկայացնել միայն բողոքի հետ միաժամանակ, այլև բողոքաբերը կարող է ու զրկված չէ գործի քննության ընթացքում լրացնելու/փոփոխելու/նվազեցնելու բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:

Զարգացնելով վերոգրյալ իրավական դիրքորոշումը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել նաև, որ փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ ներկայացնելու պարտականությունը կրում է նաև բողոքի քննությանը ներգրավված յուրաքանչյուր անձ և վերջինիս՝ իր առարկությունների հիմքում ընկած փաստական հանգամանքները, որոնք ուղղված են բողոքով վկայակոչված փաստերի հերքմանը, պետք է նույնպես պարունակեն, ըստ էության, Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ենթակետով սահմանված դրույթներով նախատեսված փաստացի և իրավական հիմքեր, ապացույցներ:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և վերլուծությունների արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բոլոր այն դեպքերում, երբ բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախաորա-կավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, մասնավորապես՝ երբ բողոքի վեճի առարկան հանդիսանում է հրավերում առկա որևէ պայմանի՝ գնումների օրենսդրությանը հակասելու հանգամանքը, ապա այդ՝ բողոքով վկայակոչված փաստական հանգամանքի ժխտման ապացուցման բեռը պետք է կրի պատվիրատուն, քանի որ Կարգի 22-րդ կետի իմաստով գնման առարկայի բնութագրերը սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ: Ուստի, նման դեպքերում, բողոքի քննության ընթացակարգին մասնակցող պատվիրատուն

է պարտավոր ապացուցել իր՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի պահանջների և բողոքի առարկությունների հիմքում դրված ու գործի լուծման համար նշանակություն ունեցող փաստերն ու գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխանելու հանգամանքը:

Վերոնշյալ իրավական նորմերի ու փաստական հանգամանքների հիման վրա, դրանք համադրելով Պատվիրատուի և Ընկերության կողմից ներկայացված բողոքի իրավական ու փաստական հանգամանքներին, ինչպես նաև ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված պայմանը՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պատվիրատուն Բողոքներ քննող անձին ներկայացրել է վերաբերելի և բավարար ապացույց առ այն, որ վերջինիս կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված դրույթների խախտում՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, և որ «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի Հավելված 1-ով նախատեսված՝ տեխնիկական բնութագիրը կազմված է և համապատասխանում է Օրենքի 13-րդ հոդվածի և Կարգի 21-րդ կետի դրույթներին, սահմանված տեխնիկական բնութագրում առկա այն պայմանը, որ կապուղին պետք է անցկացվի և միացումներն ապահովվեն ստորգետնյա ճանապարհներով, չի խոչընդոտում հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմաններ ունենալու իրավունքը:

www.armeps.am կայքի ուսումնասիրության արդյունքում՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ գնման ընթացակարգին մասնակցության հայտեր են ներկայացրել թվով չորս մասնակիցներ, այդ թվում՝ բողոք ներկայացրած Ընկերությունն ու Երրորդ անձը:

Մասնավորապես՝ թե «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն և թե «Յուքոմ» ՓԲԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ մրցույթին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել են, որ բավարարում են «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում են հայտեր: Ինչպես նաև ընկերությունները մասնակցության հայտի թիվ 2 հավելվածներով, հայտնել են, որ գնային առաջարկը ներկայացնում են ելնելով «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի, այդ թվում՝ կնքվելիք պայմանագրի նախագծի ուսումնասիրությունից:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ ընկերությունները ներկայացված Հավելված 1-ով և 2-ով, ըստ էության, ընդունել են

«ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերի հավելված 6-ով՝ պետության կարիքների համար տարածքային ցանցի հետ կապված ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր - գնման ժամանակացույցով սահմանված պահանջներն ու պայմանները: Հակառակ պարագայում ընկերությունները հայտ չէին ներկայացնի, ըստ այդմ՝ չէին մասնակցի գնման ընթացակարգին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից ներկայացված բողոքով բերված փաստերն ու հանգամանքները՝ հնարավոր մասնակիցների մրցակցության հավասար պայմանների խոչընդոտման առումով, հիմնավոր չեն, իսկ Ընթացակարգի պահանջներն հիմնավոր են, ինչի արդյունքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից թույլ չի տրվել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտում, որպիսի պայմաններում ՀՀ վարչապետի աշխատակազմի կողմից հայտարարված «ՀՀՎԱ-ԲՄԾՁԲ-21/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերն ենթակա չէ փոփոխման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի կողմից 01.10.2021թ.-ին ներկայացված ԳԲՔԱ-ԼՕ-2021/91 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**